«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/141

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2025 թ. N 141

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան փող. 128-130, Պ.Սևակ փող. 77, Ավան, Բաբաջանյան փող. 9

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով, 19 հունիսի 2021 թ. N 54

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի նոյեմբերի 14-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ՀՊՏՀ, Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 03 հոկտեմբերի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 11 ապրիլի 2025թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 26-30-ը մայիսի 2025թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 09 սեպտեմբերի 2025 թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 18 սեպտեմբերի 2025թ.

ՀՊՏՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Անդրե Վ. Հայնեման՝** Բրեմենի համալսարանի Դաշնային և տարածաշրջանային ֆինանսական փոխհարաբերությունների պրոֆեսոր, Գերմանիա
- **Աննե-Դյորտե Բալքս՝** Հանովերի Լայբնիցի համալսարանի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Գերմանիա
- **Արփինե Հակոբյան՝** Վանաձորի պետական համալսարանի ուսանող, Հայաստան
- **Նաիրա Դերձյան՝** «Գրանտ Թորնթոն» ընկերության խորհրդատու, Հայաստան
- **Նոննա Խաչատրյան՝** Երևանի պետական համալսարանի Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, Հայաստան
- **Տատյանա Վոլկովա՝** Ռիգայի Բիզնեսի և Ֆինանսների դպրոցի Ռազմավարական կառավարման և նորարարությունների կառավարման պրոֆեսոր, Լատվիա:

Փորձաքննությունն իրականացվել է Գերմանիայի Կրթական ծրագրերի հավատարմագրման միջոցով որակի ապահովման գործակալության (AQAS) և ՈԱԱԿ-ի հետ համատեղ: AQAS-ի և ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող համատեղ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում համալսարանի որակի ապահովման համակարգը գնահատվել է՝ սինոփսիսի ենթարկված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների համաձայն: Կիրառված չափանիշները համահունչ են Եվրոպական չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG, 2015 թ. տարբերակ) և ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Ծրագրերի մշակում, հաստատում և դադարեցում	Բավարարում է
4. Ծրագրերի շարունակական մշտադիտարկում և պարբերական վերանայում	Բավարարում է
5. Ուսանողների ուսումնառություն, դասավանդում և գնահատում	Բավարարում է
6. Ուսանողների ընդունելություն, առաջադիմություն, ճանաչում և հավաստագրում	Բավարարում է
7. Դասախոսական կազմ	Բավարարում է
8. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
9. Ռեսուրսներ և ուսանողների աջակցություն	Բավարարում է
10. Հանրությանը տեղեկատվության տրամադրում	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՊՏՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով բուհի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության

ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Վերջին հավատարմագրումից հետո ՀՊՏՀ-ում իրականացված ռազմավարական քայլերը նպաստել են **որակավորումների արժանահավատ շնորհման հիմքերի ամրապնդմանը**: Կրթական ծրագրերի բովանդակային վերանայումները, պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման, գնահատման և մասնագիտական զարգացման քաղաքականությունների բարելավումը, ինչպես նաև արտաքին մասնագետների ներգրավումը, այդ թվում՝ միջազգային փորձ ունեցող դասախոսների, նպաստել են ուսուցման որակի բարձրացմանը և ուսումնառության արդյունքների արժանահավատ ձևավորմանը: Հետազոտության ինտեգրումը ուսումնական գործընթացին ևս դիտարկվում է որպես դրական գործոն՝ աջակցելով կրթական ծրագրերի ակադեմիական հիմնավորվածությանը և շրջանավարտների կարողությունների զարգացմանը:
II. Հաստատությունում արձանագրվում է կառավարման և որակի ապահովման գործընթացների աստիճանական զարգացում, որը դրսևորվում է կրթական ծրագրերի, հետազոտական գործունեության և **նյութատեխնիկական** ու թվային ենթակառուցվածքների ուղղությամբ իրականացվող փոփոխությունների պլանավորմամբ՝ հիմնված համապատասխան տվյալների վրա: Միևնույն ժամանակ որակի ապահովման գործընթացների պատասխանատվությունը դեռևս հիմնականում որակի ապահովման կենտրոնի վրա է, ինչի արդյունքում դրանք ամբողջությամբ չեն գործարկվում որպես հաստատության համընդհանուր կառավարման գործիք: Այս համատեքստում նպատակահարմար է աստիճանաբար նվազեցնել գործառութային կենտրոնացվածությունը՝ որակի ապահովման մեխանիզմները զարգացնելով որպես տվյալահեն և համատեղ պատասխանատվության վրա հիմնված համակարգ, որտեղ կրթական ծրագրերի ղեկավարները, կառուցվածքային ստորաբաժանումները և շահակիցները ներգրավված կլինեն **տվյալների հավաքագրման, վերլուծության և դրանց հիման վրա բարելավման գործողությունների պլանավորման գործընթացներում**:
III. Արձանագրված առաջընթացի շարունակականությունն ապահովելու համար բարելավման պլանը նպատակահարմար է կառուցել համապարփակ և համակարգային տրամաբանությամբ՝ ընդգրկելով հաստատության գործունեության բոլոր հիմնական ուղղությունները: Կարևոր է, որ պլանում հստակ ձևակերպվեն խնդիրների լուծմանն ուղղված հաջորդական գործողությունները, դրանց իրականացումն ապահովող պատասխանատուները և չափելի արդյունքները՝ որպես **առաջիկա զարգացման** տվյալահեն կառավարման գործիք: Այս մոտեցումը կնպաստի ոչ միայն իրականացված փոփոխությունների կայունացմանը, այլև հաստատության երկարաժամկետ զարգացման նպատակների հետևողական իրականացմանը:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 6 /վեց/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ ներկայացնել ՀՊՏՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման ապահովման արդյունավետությունը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել ՀՊՏՀ-ի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՊՏՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., նոյեմբերի 14